ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հուլիսի 2011 թվականի թիվ 67 -Ա

ԱՇՈՏ ԳՅՈՉԱԼՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ> ՓԲԸ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Բաժնետիրական ընկերությունների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <թ> ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության <Նոյեմբերյանի բժշկական կենտրոն > փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2011թ. հունիսի 30-ի թիվ 3 որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Աշոտ Ստյոպայի Գյոզալյանին 2011թ. հուլիսի 6-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության < Նոյեմբերյանի բժշկական կենտրոն> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր չորս տարի ժամկետով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2011թ. մայիսի 19-ի N 51-Ա որոշման 8-րդ կետը և Ա. Գյոզալյանի հետ կնքած 2011թ. մայիսի 19-ի աշխատանքային պայմանագիրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ. հուլիսի 06
ք. Իջևան